

Սանասար վերուց Ասլիմեւիքին ըսեց.— Կ'երթաս Մեւքոն թագաւորի կուշտ, քաղքի միջէն մէկ ախշիկ աւնէ գայ ու տէրտէր մի լէ հետ վերցու գայ, ու բերէ ախշիկ պսակէ իմ վրէն:

Ախշիկ մէկ տեղէն վերցուցին ու էկան:

Սանասար ըսեց.— Մեւքոն թագաւոր, մեր բերդի անուն գիր, նոր մտի բերդի մէջ:

Վերուց թագաւոր թէ՛.— Ձեր բերդի անուն սուն վեր սան— Սասուն:

Ու էն բերդի անուն մնաց Սասուն:

Ախշիկ լէ պսակեց Սանասարի վրէն:

Էդ տեղէն ետ դարձաւ Մեւքոն թագաւոր ու գնաց ուր տուն:

Սանասարն օր պսակուաւ, Ասլիմեւիք ջոկաւ, ջոկ քնաւ. յար էդ օր էրկու ախպէր մէկ տեղ կ'քնէն:

Ասլիմեւիք քնուկ էր. մէկ լէ տեսաւ ջոջ կուռք էղաւ մէկ իծու օրինակ, էկաւ գլխու վերեւ ու մկմկաց, յարի լուս չ'թողեց քնէր:

Մէկ ամիս թամամ էդմալ կ'էնէր:

Ամիսն օր թրմաւ, դեղնուտեն թափաւ Ասլիմեւիքի վրէն, հիււրնդցաւ:

Սանասար հարցուց թէ՛.— Յո՞րի իս հիււրնդցէ:

Ասլիմեւիք լէ վերուց թէ՛.— Էդ մէկ ամիս ջոջ կուռք չ'թողի ես գիշեր քնիմ. կ'էղնի իծու պէս, գիշեր կիգայ իմ գլխու վերեւ կ'մկմկայ, չ'թողի ես քնիմ: Ես կ'երթամ. ես իմ հէր ընձի պղի մատաղ էնէ ջոջ կռքին, ես ես իմ հօր:

Էլաւ, ընկաւ ճամբախ:

Գնաց, հասաւ ուր հօր քաղաք. օր գնաց հասաւ ի քաղաք<sup>1)</sup>

<sup>1)</sup> Նախդիրների գործածութիւնը գբաբարի նման՝ սովորական է այս բարբառում, օր. գնաց հասաւ ի քաղաք, նախիր բջեց ի սար, գացին ի Ղարս. մինչև իսկ պահպանուել է նախդրի փոփոխութեան